# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի համապատասխան։

Հաստատություն՝ Երևանի հ. 96 <<Հեքիաթ>> մսուր մանկապարտեզ

Դաստիարակ՝ Պողոսյան Կարինե

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2022

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ……4

2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐԸ……7

3. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ……10

4.ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ……14

Եզրակացություն……16

Օգտագործված գրականության ցանկ……18

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթության չափորոշիչը կազմում է վաղ մանկության զարգացման ընդհանուր չափորոշչի բաղադրամաս և սահմանում նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակության նախագծման հիմնական ուղղությունները:

Նախադպրոցական կրթական չափորոշիչների բովանդակությանը պայմանականորեն տարանջատված է ոլորտ-տիրույթների և բաղադրիչների:

Չափորոշիչը նպատակաուղղված է նախադպրոցական տարիքի երեխայի իմացական շարժառիթների խթանմանը, նրա ինքնաճանաչման, ինքնադրսևորման, համակողմանի և ներդաշնակ զարգացման ապահովմանը, առողջ կենսակերպի հիմքերի ձևավորմանն ու սոցիալականացմանը:

Չափորոշիչը մշակվում է «Կրթության մասին» ՀՀ օրենսդրության, հանրակրթության պետական կրթակարգի, վաղ մանկության զարգացման հայեցակարգի և ռազմավարության պահանջներին համապատասխան:

Չափորոշիչը նաև կրթական հիմնական ծրագրերի նպատակների իրագործումը ցույց տվող չափանիշների կատարման ընդհանուր մակարդակն է, երեխայակենտրոն կրթության հիմքը, որը հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու երեխաների անձը, հենվելու երեխաների ուժեղ կողմերի վրա և խթանելու համատեղ ուսումնառություն:

Չափորոշիչը որոշակի է, հասանելի, իրատեսական, համապարփակ և ժամկետային: Չափորոշիչի ներդրումը պարտադիր է նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար:

## 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

*Չափորոշիչը կանոնակարգող փաստաթուղթ է, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները:*

Չափորոշիչին համապատասխան մշակվում են կրթական ծրագրեր, կանոնակարգող ակտերի նախագծեր, ուղեցույցներ, երաշխավորություններ, հաղորդաշարեր: Չափորոշչի հիման վրա կատարվում են դիտարկումներ և այլն: Այսինքն՝ չափորոշիչը համարվում է հայեցակարգերի, ծրագրերի (այդ թվում նաև վերապատրաստման տարբերակված ծրագրերի), մեթոդական ուղեցույցների մշակման, դրանց գործնականում ներդրման և ինչպես վերը նշվեց, երեխայակենտրոն կրթության իրականացման հիմք:

Չափորոշչի ձևավորման հիմնական սկզբունքներն են՝ երեխաների զարգացման և անհատական առանձնահատկությունների հաշվառումը, խաղի գերակայությունը և խաղային գործունեության, կրթական աշխատանքների անհատականացումը և պլանավորումը, մտքի և խոսքի ազատ դրսևորումը, ծնողների ներգրավումը մանկապարտեզի առօրյայում, երեխաների սահուն տարրական դպրոցի անցման կազմակերպումն ու իրականացումը, ստեղծագործական ունակությունների զարգացումը, մասնավոր մեթոդիկաների տիրապետումը, զարգացնող առարկայական և ֆիզիկական միջավայրի ապահովումը:

Չափորոշիչի որակական պահանջները սահմանվում են ըստ տարիքի և զարգացման ոլորտների այնպես, որ հասանելի լինի անապահով ընտանիքներին:

Չափորոիչի հիման վրա աշխատանքը ակնկալում է միասնական հենքային դաշտի ստեղծում, կրթական ոլորտի զարգացում և նորացում, կադրերի մասնագիտական կատարելագործում, հիմնական արժեքային հարաբերությունների ձևավորում և այլն:

Չափորոշիչով սահմանված կրթության բովանդակության հասանելիությունն ապահովվում է զարգացման հիմնական ուղղություններին համապատասխան հետևյալ բաղադրիչներով՝ գիտելիք, կարողություն, հմտություն, արժեքային համակարգ:

Նախադպրոցական կրթության պետական կրթական, զարգացման և միջավայրային չափորոշիչները կազմում են վաղ մանկության զարգացման ընդհանուր չափորոշչի բաղադրամասեր և սահմանում նախադպրոցական երեխաների կրթական ծրագրերի բովանդակության նախագծման հիմնական ուղղությունները: Չափորոշչում նախադպրոցական կրթության բովանդակությունը ներկայացվում է պայմանականորեն տարանջատված կրթադաստիարչական ոլորտ-տիրույթների և բաղադրիչների միջոցով:

Չափորոշիչը նաև կրթադաստիարակչական հիմնական ծրագրերի նպատակների իրագործումը ցույց տվող չափանիշների կատարման ընդունված մակարդակն է:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմք:

Ըստ չափորոշչի, մշակվում են նաև միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների նախադպրոցական ֆակուլտետների /բաժինների/ ուսումնական ծրագրեր և ծնողների կրթության ծրագրեր: Չափորոշչի ներդրումը պարտադիր է նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար:

Չափորոշչին համապատասխան՝

1. Ստեղծվում է երեխաների անվտանգության, խնամքի ու կրթության համար անհրաժեշտ միջավայր, այդ թվում՝ շենքային ու սանիտարահիգիենիկ պայմաններ:

2. Մշակվում են նորմատիվ ակտերի նախագծեր, նախադպրոցական կրթության ծրագրեր, ուսումնամեթոդական փաստաթղթեր և նյութեր, այդ թվում՝ երեխաների ծնողների և խնամողների համար երաշխավորություններ, ուղեցույցներ, հանրամատչելի գրքույկներ, պատրաստվում են հեռուստատեսային և ռադիոհաղորդումներ:

3. Ստեղծվում են միջին և բարձրագույն մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրեր և պլաններ:

4. Իրականացվում է նախադպրոցական կրթության բնագավառում աշխատող ղեկավար, մանկավարժական կադրերի ու սպասարկող անձնակազմի պատրաստումը, որակավորումը, մասնագիտական կատարելագործումը և ատեստավորումը:

5. Նախագծվում և արտադրվում են երեխաների տարիքային ու ֆիզիոլոգիական առանձնահատկություններին համապատասխան ուսումնական և կենցաղային գույք, խաղալիքներ, դիտողական նյութեր, իրականացվում է դրանց փորձաքննությունը:

6. Ուսումնասիրվում, վերահսկվում և գնահատվում է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների գործունեությունը:

7. Դիտարկվում, չափորոշվում-հաշվառվում է երեխայի ֆիզիկական, մտավոր, հոգևոր-հուզակամային /էմոցիոնալ/ զարգացման ընթացքն ու մակարդակը:

8. Իրականացվում է պետական և համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը:

## 2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐԸ

Չափորոշչի ձևավորման հիմնական սկզբունքները տրված են հանրակրթության պետական կրթակարգում: Դրանք են՝

- երեխաների զարգացման առանձնահատկությունների հաշվառում, կրթական աշխատանքի անհատականացման ապահովումը,
- երեխաներին ներկայացվող պահանջների և նրանցից ունեցած ակնկալիքների հստակ սահմանումը, մտքի և խոսքի ազատ դրսևորման ապահովումը,
- ուսումնադաստիարակչական գործունեությունը պլանավորելիս համալիր, բազմակողմանի և ներդաշնակ մոտեցման, խաղի գերակայության և խաղային գործունեության ապահովումը,
- զարգացնող առարկայական և ֆիզիկական միջավայրի ստեղծման կարևորումը
- ուսումնադաստիարակչական ծրագրերում խոսքի զարգացման, մայրենի լեզվով հաղորդակցվելու, տրամաբանական մտածողության, ինքնուրույն գործունեության տարբեր ձևերի տիրապետման, ֆիզիկական, բարոյագեղագիտական, հայրենասիրական, բնապահպանական, աշխատանքային դաստիարակության ապահովումը,
- բարեկիրթ վարքի դաստիարակման, ստեղծագործական ունակությունների, ընդունակությունների և հնարամտության առողջ սովորությունների զարգացման ապահովումը,
- ուսումնադաստիարակչական գործընթացում ընտանիքի գործուն դերի ապահովումը, ծնողների ներգրավումը,
- տարրական դպրոց երեխայի սահուն անցման ապահովումը:

Երեխաները լավ են սովորում այն միջավայրում, որտեղ բավարարվում են նրանց ֆիզիկական և հոգեբանական կարիքները, որտեղ նրանք իրենց պաշտպանված են զգում, գնահատվում են որպես յուրահատուկ անհատներ և ակտիվորեն ներգրավվում հմտություններ և գիտելիքներ ձեռք բերելու նպատակով կազմակերպված խաղերում և աշխատանքներում:

- Երեխաները ակտիվ սովորողներ են և ուզում են հասկանալ այն աշխարհը, որտեղ ապրում են,
- Երեխաները սովորում են խաղի միջոցով և խաղում,
- Իրենց գիտելիքները և արժեքները երեխաները կառուցում են հասակակիցների, ծնողների և այլ մեծերի հետ փոխհարաբերությունների, ինչպես նաև ֆիզիկական և հասարակական միջավայրի ակտիվ ուսումնասիրությունների միջոցով,
- Ընտանիքները /ծնողները/ երեխայի առաջին և կարևոր ուսուցիչներն են,
- Չկա իրար նման երկու երեխա: Երեխաների սեփական փորձը, վերաբերմունքը, հնտությունները և սովորելու ոճը ազդում են նրանց ուսումնառության վրա:

Չափորոշչային վերոհիշյալ սկզբունքներից հետևում է, որ բարձրորակ նախադպրոցական կրթության ապահովման համար կարևորվում են երեխան, ընտանիքը, մանկավարժը, ուսումնական ծրագրերը և կրթության կազմակերպման միջավայրը:

Նախադպրոցական կրթության չափորոշիչներով սահմանվում են այն անհրաժեշտ պայմանները, որոնցում կարող են լիարժեքորեն իրացվել երեխայի ազատ և համակողմանի զարգացման, նրա խնամքի, առողջության պահպանման ու ամրապնդման գործընթացները:

Նախադպրոցական կրթության ծրագրերը մշակվում են չափորոշչին համապատասխան և դիտարկվում որպես հանրակրթության բաղադրիչ՝ ապահովելով երեխայի կրթության շարունակությունը:

*Չափորոշիչների կառուցվածքը*

- Ոլորտները (ուսումնառության զարգացման ուղղությունները),
- Ենթաոլորտները (տյալ ոլորտի բաղկացուցիչ մասերը),
- Չափորոշիչները սահմանում են տվյալ ենթաոլորտում երեխայից ակնկալվող վարքագիծը,
- Ցուցիչները նշում են, թե երեխան ինչ գիտի և ինչ է անում կամ ինչպիսի դիտարկելի վարքագիծ է դրսևորում,
- Օրինակները բացատրում են յուրաքանչյուր ցուցչի իմաստը:

*Չափորոշիչները դասակարգված են ըստ հետևյալ վեց ոլորտների՝*

1. Շարժողական
2. Խոսք և լեզու
3. Իմացական
4. Հուզական, անձնային և սոցիալական զարգացում
5. Ինքնասպասարկում և անվտանգություն
6. Վերաբերմունք սովորելու նկատմամբ:

## 3. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախադպրոցական ուսումնական հաստատության կոլեկտիվի աշխատանքը իրականացվում է հաստատության աշխատանքային պլանին համապատասխան: Ցանկացած պլան կառուցվում է ընթացիկ և առաջիկա (հեռանկարային) աշխատանքների միասնության մեջ նվազագույն ջանքերի ներդրմամբ՝ կոնկրետ նպատակներին հասնելու, վերջնական որոշումների կայացման բարձր արդյունավետությամբ:

Պրակտիկան ցույց է տալիս, որ պլանն արդյունավետ է միայն այն դեպքում, եթե այն հենվում է մանկավարժական գիտության նվաճումների, առաջավոր փորձի ուսումնասիրության, տվյալ փուլում ծառացած և հեռանկարային խնդիրների հաշվառմամբ:

Տնօրենի ղեկավարման գործունեության կատարելագործումը պայմանավորված է աշխատանքի մոդելավորման և խելամիտ պլանավորման հետ:

Տարեկան պլանները առավել հաճախ ծանրաբեռնվում են միջոցառումներով, որոնք սովորաբար միմյանց հետ քիչ կապ ունեն և չեն արտացոլում աշխատանքի ամբողջական համակարգը՝ ի հայտ եկած գլխավոր պրոբլեմների ուղղությամբ:

Այս բոլորը բացատրվում է ուսումնադաստիարակչական աշխատանքների գործընթացի խոր և համակողմանի վերլուծության բացակայությամբ:

Որո՞նք են ղեկավարման և կառավարման ընդհանուր սկզբունքները:

1. Պլանը պետք է լինի կոնկրետ, իրագործելի:

Հետևողական պլանավորելով աշխատանքը՝ ղեկավարը սահմանում է կոնկրետ ցուցանիշներ, որոնցով հնարավոր է ստուգել դրանց կատարումը: Լավագույն պլանը բնութագրվում է մանկավարժական նպատակասլացությամբ, նախապես մտածված միջոցներով:

2. Պլանում պետք է սերտորեն կապված լինեն միջոցառումները, որոնք վերաբերում են կոլեկտիվի գործունեության բոլոր կողմերին:

3. Պլանի յուրաքանչյուր բաժինը պետք է պարունակի այնպիսի գործողություններ, որոնք ուղղորդված են նախադպրոցական հաստատության աշխատանքի բարելավմանը՝ հաշվի առնելով այդ հաստատության առանձնահատկությունները:

4. Պլանավորման համակարգային և համալիր մոտեցումը ենթադրում է, որ պրոբլեմների լուծումը պետք է հետամուտ լինի կադրերի հետ տարվող աշխատանքի տարբեր ձևերին:

5. Պլանը պետք է լինի օպտիմալ: Դա նշանակում է, որ պլանավորման ժամանակ պետք է կիրառվեն տարբեր ձևեր, մեթոդներ և մոդելներ հեռանկարային զարգացման համար:

Հաստատության աշխատանքի տարեկան պլանը ներառում է ուսումնական տարվա արդյունքների մանկավարժական վերլուծություն, նպատակները և ուղղությունները, հաջորդ տարվա համար միջոցառումները այդ նպատակին հասնելու համար: Հաստատության ղեկավարները մեթոդական աշխատանքի պլանավորման ժամանակ վերլուծում է յուրաքանչյուր դաստիարակի մանկավարժական գործունեության արդյունքները, որոնք ի հայտ են եկել երեխաների գիտելիքների, կարողությունների, հմտությունների դրսևորման ժամանակ:

Այսպիսով՝ սահմանվում են մանկավարժական գործընթացի կազմակերպման և արդյունքի պատճառահետևանքային կապերը: Միայն դրա հիման վրա հնարավոր է որոշել կոլեկտիվի աշխատանքի նպատակներն ու ուղղվածությունը, պլանավորել կադրերի հետ տարբերակված աշխատանքը: Ընդ որում, ղեկավարվելով ժողովրդավարական սկզբունքներով, մանկավարժական վերլուծությունը նպատակահարմար է անցկացնել կոլեկտիվի յուրաքանչյուր անդամին ընդգրկելով: Դաստիարակները վերլուծում են մանկապարտեզի կրթական համալիր ծրագրով նախատեսված ուսուցման և դաստիարակության ծրագրային խնդիրների յուրացումն իրենց խմբում և դրանց զարգացումն ամբողջությամբ, այն շարադրում ղեկավարի հետ

նախնական զրույցի ժամանակ: Մոդելավորելով այդ աշխատանքն ամբողջությամբ, ուստարեվերջին հաստատության ղեկավարը կազմում է զրույցի անցկացման գրաֆիկ, ծանոթացնում բոլոր աշխատակիցներին, բացահայտում, թե ինչպես պետք է նախապատրաստվեն: Երկու դաստիարակներ, հիմք ունենալով կրթական ծրագիրը, միասին քննարկում և յուրաքանչյուր բաժնի գծով գնահատում են իրենց աշխատանքի արդյունքները տվյալ ուստարում:

Տնօրինությունը (տնօրենը և մեթոդիստը) նույնպես պատրաստվում են այդ զրույցին, միաժամանակ դիտարկելով խմբում կատարած այցելությունների վերաբերյալ իրենց գրառումները, թեմատիկ ուսումնասիրությունները, երեխաների հետ տարված զրույցները:

Գործնական զրույցի և երկխոսության միջոցով վեր են հանվում արդյունքները, ճշտվում դաստիարակի ինքնագնահատականը, ինչպես նաև ղեկավարի փորձագիտական գնահատականը: Արդյունքները գրանցվում են «Մանկապարտեզի կրթական ծրագրի» իրականացման գծապատկերում, որտեղ գնահատվում է ծրագրի յուրաքանչյուր բաժինը:

Գրաֆիկով պարզ է դառնում, թե արդյոք որ բաժիններն են իրագործում ոչ պատշաճ մակարդակով, հետևաբար այդ բաժինները պետք է դառնան հաջորդ ուսումնական տարվա համար հիմնական ուղղություն: Գծապատկերի հիման վրա կարելի է կառուցել կադրերի հետ տարվող աշխատանքների համակարգը հաջորդ տարում: Այսպիսով՝ մանկավարժական խորհրդի նիստի հանրագումարային արդյունքներով պետք է տրվեն կրթադաստիարակչական աշխատանքների խոր և համակողմանի վերլուծության, որի հիման վրա պետք է կանխորոշվեն աշխատանքի որոշակի հիմնական ուղղությունները հաջորդ տարվա համար:

Մանկավարժական վերլուծությունը մանկավարժական գործընթացների միջև պատճառահետևանքային կապի բացահայտումն է (այն ներառում է աշխատանքի ձևերն ու մեթոդները, ոճը, մանկավարժական աշխատանքի տեխնիկան, տեխնիկական

հագեցվածությունը և այլն) մանկավարժական գործունեության արդյունքների ամրագրումը:

Կարևորագույն պահանջներից մեկը հաստատության կոլեկտիվին ուսումնական տարվա հիմնական ուղղությունների և միջոցառումների մասին իրազեկելն է: Այդ իսկ պատճառով տարեկան պլանը մանկավարժական խորհրդում հաստատվելուց հետո պետք է ներկայացվի տեսանելի տեղում, վահանակի վրա: Ներկայացման ձևը կարող է լինել տարբեր՝ գրաֆիկական, գծապատկերային և այլն: Տարեկան պլանից ելնելով՝ յուրաքանչյուր աշխատակից պետք է պլանավորի իր աշխատանքը:

Առաջարկվում է կադրերի հետ տարվող աշխատանքի ամսական պլանի տարբերակներ.

**1-ին տարբերակ** – Պաշտոնային պարտականությունների հաշվառմամբ հաստատության ղեկավարը պլանավորում է աշխատանքը յուրաքանչյուր ամսվա համար: Այս դեպքում, եթե պլանավորման մեջ փոփոխություն է տեղի ունենում, պլանի հակառակ երեսի վրա նշագրում է կատարվում, որը հնարավորություն է տալիս այդ աշխատանքը տեղափոխել հաջորդ ամիս: Այս պլանավորման առավելությունն այն է, որ ցանկացած ժամկետի վերջում (ամիս, եռամսյակ, կիսամյակ, տարի) ղեկավարը կարող է հեշտությամբ վերլուծել իրականացված աշխատանքը, առանձնացնել այն պահերը, որոնք նա հաշվի է առնում և համաչափորեն բաշխում հաջորդական աշխատանքը:

**2-րդ տարբերակ** – Ուսումնական տարվա սկզբում ղեկավարը կազմում է տնօրենի գործունեության հիմնական տեսակների բաշխումը, այնուհետև օգտվում է գրառումների տետրից, որտեղ պլանավորվում է ընթացիկ գործերն ամսվա ընթացքում:

## 4. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վերահսկողությունը մանկապարտեզի տնօրենի ղեկավարման գործունեության գործառույթներից մեկն է:

Իր նշանակությամբ վերահսկողությունը բազմաֆունկցիոնալ է, որը հնարավորություն է տալիս ստուգել յուրաքանչյուր ստորաբաժանման պարտավորությունների կատարումը, խմբերում ուսումնադաստիարակչական գործընթացի վիճակը, կանխարգելել հնարավոր շեղումները:

Վերահսկողության գործընթացում որոշվում է նաև մանկավարժական կադրերի ուսուցման խնդիրը: Ղեկավարը տալիս է խորհուրդներ, հանձնարարականներ, վկայակոչում առաջավոր փորձի օրինակներ:

Տնօրենը պետք է հիշի, որ արդի պայմաններում մանկավարժի գործունեության վերահսկողությունը՝ ինքնավերլուծության, ինքնագնահատականի և ինքնաստուգման համադրման հետ մեկտեղ է տալիս դրական արդյունք: Դաստիարակի աշխատանքը ստեղծագործական է, ուստի նրա աշխատանքի վերահսկողության կազմակերպման ձևի հանդեպ պետք է ցուցաբերել տարբերակված մոտեցում:

Կան մանկավարժներ, որոնց պետք է միայն ուղղորդել նոր գաղափարներ և պետք չէ ուժեր վատնել մանր ստուգումների վրա, քանի որ խոսքը գնում է «իրենց գործի վարպետների» մասին: Առանձին դաստիարակներ կարիք ունեն միայն մեթոդական վերահսկողության: Կան դաստիարակներ, որոնք ունեն կոշտ վերահսկողության կարիք:

Նման տարբերակային մոտեցումը առավել օպտիմալ է:

Հաջորդ պահանջը վերահսկողության պլանայնությունն ու հրապարակայնությունն է:

*Վերահսկողության առավել տարածված ձևերը 3-ն են.*

Օպերատիվ, թեմատիկ, հանրագումարային:

Օպերատիվ վերահսկողությունը բաժանվում է.

Նախազգուշական, համեմատական, դիագնոստիկ և այլն:

Օպերատիվ ստուգման առանձնահատկությունն այն է, որ դրա օգնությամբ կարելի է առանձին մանկավարժների կամ կոլեկտիվի աշխատանքում վերացնել աննշան շեղումները խորհրդատվության և հանձնարականների միջոցով:

Ուստարեվերջին ստացված նյութերը կարող են օգտագործվել ամփոփիչ մանկխորհրդում:

Թեմատիկ ստուգման և վերլուծության գլխավոր առարկան՝ երեխաների հետ տարվող մանկավարժական աշխատանքի համակարգն է՝ ծրագրի մեկ բաժնի շրջանակներում:

Երեխաների հետ տարվող աշխատանքների վիճակի ուսումնասիրությանը նախապատրաստվելիս կազմվում է հակիրճ պլան, որտեղ նշվում է ստուգման նպատակը, ժամկետները, տարիքային խմբերը, պատասխանատուները, ստուգման մեթոդիկան: Թեմատիկ ստուգման պլանի հետ մանկավարժական կոլեկտիվը ծանոթանում է նախապես:

Թեմատիկ ստուգման արդյունքների և համակողմանի վերլուծության հիման վրա ընդունվում է կոնկրետ գործողությունների պլան, որն արտացոլվում է մանկավարժական խորհրդի նիստերի որոշումներում:

Էական նշանակություն ունի նաև հանրագումարային ստուգումը, որը ղեկավարն իրականացնում է հաշվետու ժամանակաշրջանի (կիսամյակ, տարի) ավարտից հետո: Այն նպատակառղղվում է հիմնական գործոնների համալիր ուսումնասիրությանը, որոնք ներգործում են նախադպրոցական հաստատության աշխատանքի վերջնական արդյունքների վրա: Հանրագումարային ստուգման արդյունքները նպատակահարմար է օգտագործել մանկավարժների հերթական ատեստացիայի ընթացքում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը:

Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է:

Չափորոշիչը ներառում է՝

1) ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները.

2) երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը.

3) երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը.

4) նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառական և երեխայակենտրոն միջավայրի չափանիշները, որոնք հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը.

5) նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի անվտանգ միջավայրի և աղետներին պատրաստվածության չափանիշները:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը. հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը:

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի իրականացումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից:

Ըստ չափորոշչի, մշակվում են միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների նախադպրոցական ֆակուլտետների (բաժինների) ուսումնական ծրագրեր և վերապատրաստումների թեմատիկ պլաններ, ծնողական կրթության ծրագրեր:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


- «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք.
- «Նախադպրոցական մանկավարժություն» - Երևան 2008 թ. /Ս. Մարության, Ա. Դալլաքյան/
- «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» - Երևան 2010թ. /Հ. Միտոյան, Լ. Սմբատյան/
- Մանկապարտեզի վաղ հասակի առաջին և երկրորդ խմբերի (կյանքի առաջին և երկրորդ տարի) կրթական համալիր ծրագիր» - Երևան 2012 թ. /Ա. Հովհաննիսյան, Ս. Մարության և ուրիշներ/
- «Մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի /2-3 տարեկանների/ կրթական համալիր ծրագիր» /- Երևան 2012թ. /Հ. Միտոյան, Ս. Մարության և ուրիշներ/
- «Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի /3-4 տարեկանների/ կրթական համալիր ծրագիր» - Երևան 2011 թ. /Ա. Հովհաննիսյան, Հ. Մինասյան և ուրիշներ/
- «Մանկապարտեզի միջին խմբի /4-5 տարեկանների/ կրթական համալիր ծրագիր» - Երևան 2011 թ. /Հ. Միտոյան, Ս. Մարության և ուրիշներ/
- ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, http://edu.nk.am/
- Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575, ընդ. 21.05.2021